

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման  
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Վ.Վ.Հարությունյան /Ա.Ա.Հ./

Արձանագրություն № 1

«28» օգոստոսի 2023թ.

ԷԻԿ/Բ-130, Քաղաքացիական իրավունք 3, ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝

042101.00.6, Իրավագիտություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

042101.01.6, Իրավագիտություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝

իրավագիտության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

առկա, հեռակա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

առկա 3-րդ կուրս, 1-ին կիսամյակ

հեռակա 3-րդ կուրս, 1-ին կիսամյակ

Դասախոս(ներ)՝

Վարդուհի Հովնանյան

/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ [varduhi.hovnanyan@mail.ru](mailto:varduhi.hovnanyan@mail.ru)

Վանաձոր- 2023թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում .....	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները .....	3
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .....	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները .....	..
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների .....	..
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը .....	..
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները .....	..
8.	Դասավանդման մեթոդներ .....	..
9.	Ուսումնառության մեթոդները .....	..
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը .....	..
11.	Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ .....	..
12.	Դասընթացի ուսումնամեթոդական քարտ .....	..
	12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ .....	..
	12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ .....	..
	12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ .....	..
	12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ .....	..
13.	Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում .....	..
14.	Գնահատում .....	..
	14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում .....	..
	14.2. Հարցաշար .....	..
	14.3. Գնահատման չափանիշներ .....	..
15.	Դասընթացի համառոտ նկարագրիչ .....	..

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում<sup>1</sup>.

«Քաղաքացիական իրավունք 3» դասընթացը կարևորվում է իրավագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 042101.01.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

### 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

#### 2.1. Դասընթացի նպատակն է.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկություններին, դրանց մասնակցող սուբյեկտների իրավասուբյեկտությանը, իրավունքներին ու պարտականություններին, քաղաքացիական իրավունքի օբյեկտների կարգավիճակին, իրավունքների պաշտպանության եղանակներին ու կարգին

#### 2.2. Դասընթացի խնդիրներն են.

- ուսանողների մոտ ձևավորել համապատասխան հմտություններ վերլուծելու նոր գիտելիքն ու այն համադրելու արդեն իսկ գոյություն ունեցողի հետ
- ուսանողների մոտ ձևավորելու վերլուծական մտածողություն
- ձևավորելու քննադատական մտածողություն, ստացած նոր գիտելիքը սինթեզելու կարողություն

### 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.

«Քաղաքացիական իրավունք 3» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը 042101.01.6 «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Քաղաքացիական իրավունք 1», «Քաղաքացիական իրավունք 2» և այլ մասնագիտական առարկաներից:

### 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը<sup>2</sup> և /կամ կոմպետենցիաները.

«Քաղաքացիական իրավունք 3» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

<sup>1</sup> Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

<sup>2</sup> <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

## **Գիտելիք**

### *Գիտելիք և իմացություն*

- 1) Հայաստանի և այլ երկրների պետության և իրավունքի պատմության վերաբերյալ հիմնարար գիտելիք:
- 2) Իրավունքի հիմնական ճյուղերի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության, աշխատանքային իրավունքի, քրեական իրավունքի և քրեական դատավարության, էկոլոգիական իրավունքի, միջազգային հանրային իրավունքի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք:

## **Հմտություն**

### *Գիտելիքի և իմացության կիրառում*

- 1) Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:
- 2) Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն:
- 3) Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության և համայնքի իրավունքներն ու օրինական շահերը:
- 4) Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը:
- 5) Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել վերաբերելի դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին:
- 6) Կարող է վերհանել իրավական խնդիրը, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի իրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ:

### *Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ*

- 1) Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, խնդիրներ և լուծումներ:
- 2) Կարող է իր գործունեության ընթացքում կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար:
- 3) Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:
- 4) Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները:

### *Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)*

- 1) Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար:
- 2) Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում:

## **Կարողունակություն**

### *Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)*

- 1) Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին:
- 2) Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
- 3) Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կրերի հետևյալ կոմպետենցիաները.**

**Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

- ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- ԳԿ9** խնդիրների լուծում,
- ԳԿ10** որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

- ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
- ՀԳԿ3** սովորելու ունակություն,
- ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

- ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ԱԿ11** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների<sup>3</sup>.**

«Քաղաքացիական իրավունք 3» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել իրավագիտական մասնագիտական գործունեության ընթացքում, մագիստրատուրայում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և իրավագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

**6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման**

<sup>3</sup> Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

**ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	6 կրեդիտ/180 ժամ	6 կրեդիտ/180 ժամ

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	60	12
Գործնական աշխատանք		
Սեմինար պարապմունք	30	10
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	90	158
<b>Ընդամենը</b>	180	180
Ստուգման ձևը (ստուգաքննություն/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	Ընթացիկ քննություն	2 քննություն

**7. Ուսումնական աշխատանքների տեսակները<sup>4</sup> .**

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական

<sup>4</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել էլույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալրգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են<sup>5</sup>

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոք սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից

<sup>5</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:

- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներն են**<sup>6</sup> հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր.

9. **Ուսումնառության մեթոդներն են**<sup>7</sup> մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում.

<sup>6</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

<sup>7</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:



10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների<sup>8</sup>.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ծավաքանակն ըստ տեսակների				
		ըստ բաժինների	սեմինար պարամյան	գործնական աշխատանք	լսալուստանք աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Առուծախի պայմանագիր	2				
2.	Մատակարարման պայմանագիր	2	2			
3.	Ռենտայի պայմանագիր	4	2			
4.	Փոխանակության պայմանագիր	4	2			
5.	Նվիրատվության պայմանագիր	4	2			
6.	Վարձակալության պայմանագիր	4	2			
7.	Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր	4	2			
8.	Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր	4	2			
9.	Կապալի պայմանագիր	4	2			
10.	Շինարարական կապալի պայմանագիր	4	2			
11.	Գիտահետազոտական եվ փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրեր	4	2			
12.	Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր	4	2			
13.	Հանձնարարության պայմանագիր	4	2			
14.	Կոմիսիայի (հանձնակատարության) պայմանագիր	4	2			
15.	գործակալման պայմանագիր	4	2			

<sup>8</sup> Նման է օրացուցային պլանին

16.	Պահատվության պայմանագիր	4	2			
ԸՆԴԱՄԵՆԸ		60	30			

**11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
<b>Պարտադիր գրականություն (ՊԳ)</b>		
1.	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Երկրորդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով. (Տ. Բարսեղյան, Ա.Հայկյանց, Գ. Ղարախանյան, Ս. Մեղրյան) խմբ.,	Եր., ԵՊՀ հրատ., 2008:
2.	Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ): Երկրորդ մաս, Գ.Հ. Ղարախանյանի և Տ.Կ. Բարսեղյանի խմբագրությամբ,	ԵՊՀ հրատ., Երևան, 2007:
3.	Բարսեղյան Տ.Կ., Մատակարարի պատասխանատվության մի քանի հարցեր	Եր., 1976.
4.	Բարսեղյան Տ.Կ., Պետական կարիքների համար ապրանքների մատակարարման ինստիտուտը հիմնարար կատարելագործման կարիք ունի // Օրենք և իրականություն,	Եր.,2002, փետրվար:
5.	Հայկական ՄՍՀ քաղաքացիական իրավունք, հատոր 2, Ս.Հ. Հովհաննիսյանի խմբ.,	Եր.,ԵՊՀ հրատ., 1982:
6.	Ղարախանյան Գ.Հ., Բնակարանային վարձակալության պայմանագրի դադարումը,	Եր., 1986:
7.	Ղարախանյան Գ.Հ., ՀՀ բնակարանային իրավունք,	Եր., 1995:
8.	Ղարախանյան Գ.Հ., Ֆինանսական վարձակալության պայմանագիր (լիզինգ) // Պետություն և իրավունք,	Եր., 1999, թիվ 3:
9.	Մեղրյան Ս.Գ., Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիր,	ԵՊՀ, 2000:
<b>Լրացուցիչ գրականություն(ԼԳ)</b>		
1.	ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է հանրաքվեով 1995 թվականի հուլիսի 5-ին, փոփոխվել է հանրաքվեով 2005 թվականի նոյեմբերի 27-ին).	
2.	«Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» ՄԱԿ-ի 11.04.1980 թ. կոնվենցիան՝ կից հայտարարություններով:	
3.	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիս 5-ին).	
4.	«Գնումների մասին» ՀՀ օրենք (2004 թվականի դեկտեմբերի 6-ին)	
5.	«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թվականի դեկտեմբերի 3-ին):	
6.	«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թվականի	

	նոյեմբերի 7-ին):	
	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել 2001 թվականի հունիսի 6-ին):	
8.	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թվականի մայիսի 5-ին):	
<b>Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)</b>		
1.		
2.		

**12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ**  
**12.1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ**

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն <sup>9</sup>
1.	Առուծախի պայմանագիր	1. Առուծախի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը 2. Առուծախի պայմանագրի տարրերը 3. Վաճառողի և գնորդի իրավունքներն ու պարտականությունները: Պարտականությունները չկատարելու հետևանքները 4. Գնորդի սեփականության իրավունքի ծագման պահը: Վաճառված գույքի պատահական կորստի ռիսկը 5. Մանրածախ առուծախի պայմանագիր 6. Անշարժ գույքի առուծախի առանձնահատկությունները:	2	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
2.	Մատակարարման պայմանագիր	1. Մատակարարման պայմանագրի հասկացությունն ու առանձնահատկությունները 2. Մատակարարման պայմանագրի բովանդակությունը 3. Մատակարարման պայմանագրի	2	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

<sup>9</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն<sup>4</sup>

		կատարումը 4. Մատակարարման պայմանագիրը խախտելու իրավական հետևանքները 5. Ապրանքների մատակարարումը պետական կարիքների համար 6. Էներգամատակարարման պայմանագիր:		
3.	Ռենտայի պայմանագիր	1. Ռենտայի պայմանագրի հասկացությունը: Պայմանագրի տարրերը Ռենտայի վճարման ապահովումը, ռենտայի ձևը և չափը: 2. Ռենտայի պայմանագրի տեսակները: Մշտական և Ցմահ ռենտա:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
4.	Փոխանակության պայմանագիր	1. Փոխանակության պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, տարբերությունն առուծախի պայմանագրերից 2. Պայմանագրի բովանդակությունը: Փոխանակվող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվելը:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
5.	Նվիրատվության պայմանագիր	1. Նվիրատվության պայմանագրի հասկացությունը: Պայմանագրի տարրերը: Նվիրատվության խոստում: 2. Նվիրատվությունն արգելելը և նվիրատվության սահմանափակումները: Նվիրատվությունը վերացնելը: 3. Նվիրատվության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրի դադարումը: 4. Նվիրաբերում:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
6.	Վարձակալության պայմանագիր	1. Վարձակալության պայմանագրի հասկացությունը և նշանակությունը: Տարբերությունը մյուս պայմանագրերից: 2. Վարձակալության պայմանագրի	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

		<p>տարրերը:Պայմանագրի առարկային ներկայացվող պահանջները:</p> <p>3. Վարձակալության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Վարձավճար:</p> <p>4. Ենթավարձակալության, վերավարձակալության, նոր ժամկետով վարձակալության պայմանագիր:</p> <p>5. Վարձակալության պայմանագրի դադարումը:</p> <p>6. Վարձակալության պայմանագրի առանձին տեսակները</p> <p>7. Վարձույթի պայմանագիր:</p> <p>8. Տրանսպորտային միջոցների վարձակալություն</p> <p>9. Շենքերի և շինությունների վարձակալություն:</p> <p>10. Ֆինանսական վարձակալություն (լիզինգ):</p>		
7.	<p>Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր</p>	<p>1. Բնակարանային ֆոնդի հասկացությունը: Դրանց դասակարգումը:</p> <p>2. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի հասկացությունը և նշանակությունը: Պայմանագրի տարրերը:</p> <p>3. Բնակարանային վարձակալության պայմանագրի կողմերը: Վարձակալի ընտանիքի անդամների իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>4. Բնակարանային վարձակալության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը:</p>	4	<p>ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7</p>

		<p>Ժամանակավոր բնակիչներ: Բնակելի տարածության փոխանակումը, բնակելի տարածության ենթավարձակառություն:</p> <p>5. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի փոփոխումը:</p> <p>6. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի դադարումը:</p>		
8.	Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր	<p>1. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հասկացությունը, նշանակությունը:</p> <p>Պայմանագրի տարրերը</p> <p>2. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը:</p> <p>3. Պայմանագրի դադարումը:</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
9.	Կապալի պայմանագիր	<p>1. Կապալի պայմանագրի հասկացությունը, տեսակները: Կապալի պայմանագրի սահմանազատումը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից, ինչպես նաև աշխատանքային պայմանագրից:</p> <p>2. Կապալի պայմանագրի տարրերը. կողմերը, առարկան, ձևը, ժամկետը, գինը:</p> <p>3. Կապալի պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>4. Պատասխանատվությունը կապալի պայմանագրի խախտման համար:</p> <p>5. Կենցաղային կապալի պայմանագրի առանձնահատկությունները:</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
10.	Շինարարական կապալի պայմանագիր	<p>1. Կապիտալ շինարարություն:</p> <p>Շինարարական կապալի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը:</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

		<p>2. Շինարարական կապալի պայմանագրի կնքման նախադրյալներն ու կարգը: Պայմանագրի տարրերը:</p> <p>3. Շինարարական կապալի պայմանագրի բովանդակության առանձնահատկությունները: Շինարարության օբյեկտի հանձնում-ընդունումը:</p> <p>4. Շինարարական կապալի պայմանագրի կողմերի պատասխանատվությունը:</p> <p>5. Նախագծային և հետախուզական աշխատանքների կատարման կապալի պայմանագիր:</p> <p>6. Կապալային աշխատանքներ պետական կարիքների համար:</p>		
11.	Գիտահետազոտական եվ փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրեր	<p>1. Գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի հասկացությունը և տարրերը:</p> <p>2. Գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի բովանդակությունը: Կատարողի իրավունքներն ու պարտականությունները: Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները: Կողմերի իրավունքներն արդյունքների նկատմամբ:</p> <p>3. Կողմերի պատասխանատվությունը:</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
12.	Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր	<p>1. Ծառայությունների մատուցման պարտավորության հասկացությունը:</p> <p>2. Հատուցմամբ ծառայությունների մատուցման պայմանագրի հասկացությունը</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

		և տարրերը: Պայմանագրի տեսակները: 3. Պայմանագրի բովանդակությունը: Պայմանագրի կատարումը		
13.	Հանձնարարության պայմանագիր	1. Հանձնարարության պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, կիրառման բնագավառը: 2. Հանձնարարության պայմանագրի տարրերը, կողմերը, առարկան, ժամկետը, գինը: 3. Հանձնարարության պայմանագրի բովանդակությունը: Հանձնարարողի պարտականությունները, հանձնակատարի պարտականությունները: 4. Հանձնարարության պայմանագրի դադարումը: Առանձնահատկությունները:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
14.	Կոմիսիայի (հանձնակատարության) պայմանագիր	1. Կոմիսիայի պայմանագրի հասկացությունը և տեսակները: 2. Կոմիսիայի պայմանագրի տարրերը. կողմերը, առարկան, գինը, ժամկետը: 3. Կոմիսիայի պայմանագրի բովանդակությունը: Կոմիսիոների պարտականությունները: Կոմիտենտի պարտականությունները: 4. Կոմիսիայի պայմանագրի դադարումը: Առանձնահատկությունները:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
15.	Գործակալման պայմանագիր	1. Գործակալման պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, տարբերությունը մյուս պայմանագրերից: 2. Գործակալման պայմանագրի տարրերը. կողմերը, առարկան, ձևը, ժամկետը:	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7



		<p>3. Գործակալման պայմանագրի բովանդակությունը: Գործակալի պարտականությունները: Պրինցիպալի պարտականությունները:</p> <p>4. Պայմանագրի դադարումը: Դադարման առանձնահատկությունները:</p>		
16.	Պահատվության պայմանագիր	<p>1. Պահատվության պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, տարբերությունը մյուս պայմանագրերից:</p> <p>2. Պահատվության պայմանագրի տարրերը. կողմերը, առարկան, ժամկետը, գինը, ձևը:</p> <p>3. Պահատվության պայմանագրի բովանդակությունը: Պահատուի իրավունքներն ու պարտականությունները: Պահատուի իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>4. Պատասխանատվությունը պահատվության պայմանագրով: Պահատուի պատասխանատվությունը: Պահատուի պատասխանատվությունը:</p> <p>5. Պահեստային պահատվության պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները: Պայմանագրի ձևակերպումը: Պահեստային փաստաթղթեր:</p> <p>6. Պահատվության պայմանագրի տեսակները:</p> <p>7. Պահատվություն գրավատանը:</p> <p>8. Արժեքների պահատվությունը բանկում:</p> <p>9. Պահատվությունը տրանսպորտային կազմակերպությունների պահասենյակներում:</p> <p>10. Պահատվությունը</p>	4	ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

		կազմակերպությունների հանդերձարաններում: 11. Պահատվությունը հյուրանոցներում: 12. Վեճի առարկա գույքի պահատվությունը (սեկվեստր):		
--	--	---	--	--

**12.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Մտուցման ձևը	Գրականություն <sup>10</sup>
1.	Մատակարարման պայմանագիր	1. Մատակարարման պայմանագրի հասկացությունն ու առանձնահատկությունները 2. Մատակարարման պայմանագրի բովանդակությունը 3. Մատակարարման պայմանագրի կատարումը 4. Մատակարարման պայմանագիրը խախտելու իրավական հետևանքները 5. Ապրանքների մատակարարումը պետական կարիքների համար 6. Էներգամատակարարման պայմանագիր:	2		ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
2.	Ռենտայի պայմանագիր	1. Ռենտայի պայմանագրի հասկացությունը: Պայմանագրի տարրերը Ռենտայի վճարման ապահովումը, ռենտայի ձևը և չափը: 2. Ռենտայի պայմանագրի տեսակները: Մշտական և Ցմահ ռենտա:	2		ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
3.	Փոխանակության պայմանագիր	1. Փոխանակության պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, տարբերությունն	2		ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7

<sup>10</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		առուծախի պայմանագրերից 2. Պայմանագրի բովանդակությունը: Փոխանակվող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվելը:			
4.	Նվիրատվության պայմանագիր	1. Նվիրատվության պայմանագրի հասկացությունը: Պայմանագրի տարրերը: Նվիրատվության խոստում: 2. Նվիրատվությունն արգելելը և նվիրատվության սահմանափակումները: Նվիրատվությունը վերացնելը: 3. Նվիրատվության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրի դադարումը: 4. Նվիրաբերում:	2		ՊԳ 1,2,3,4,5,6,7,8,9 ԼԳ 1,2,3,4,5,6,7
